ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/250

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.05.2022թ. թիվ 26/26-1/9123-2022 գրությամբ «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 12.05.2022թ. թիվ 04/35/10649-2022 գրության հիման վրա, 19.05.2022թ. թիվ 26/26-1/9123-2022 գրությամբ նախաձեռնել է «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/250 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.05.2022թ. թիվ 04/35/10649-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ԴԸ ԲԵՍԹ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 03.03.2022թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/25-3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն ընկերությունը պարտավորվել էր մինչև 01.04.2022թ մատակարարել 800 հատ մալուխային միացումներ, ինչը վերջինիս կողմից չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախարարությունը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը, միակողմանի լուծել է «ԴԸ ԲԵՍԹ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի հետ 03.03.2022թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/25-3 գնման պայմանագիրը, ինչի մասին ծանուցումը 11. 05.2022թ հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը ուղարկվել է նաև «ԴԸ ԲԵՍԹ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ստորև ներկայացնում եմ «ԴԸ ԲԵՍԹ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները և համապատասխան հիմքերը /կցվում է/ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/250 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/250 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/250 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ի միջև 03.03.2022թ. կնքվել է թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/25-3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. Պայմանագրի հավելված N 2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, մալուխային միացումների մատակարարման ժամկետ է սահմանվել 2022թ.՝ մինչև ապրիլի 1-ը ներառյալ:

3. Պատվիրատուն «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ին ուղղված 11.05.2022թ. թիվ 04/35/10607-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ի միջև 03.03.2022թ կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/25-3» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն վերջինս պարտավորվել էր մինչև 01.04.2022թ մատակարարել 800 հատ մալուխային միացումներ, որը մինչ օրս չի մատակարարել:

Ելնելով վերոգրյալից, նախարարությունը, առաջնորդվելով Պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի բ) ենթակետով միակողմանի լուծում է Ձեզ հետ 03.03.2022թ կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/25-3» գնման պայմանագիրը»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 11.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.05.2022թ. թիվ 26/26-1/9123-2022 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 12.05.2022թ. թիվ 04/35/10649-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ի միջև 03.03.2022թ. կնքվել է թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/25-3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրի հավելված N 2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, մալուխային միացումների մատակարարման ժամկետ է սահմանվել 2022թ.՝ մինչև ապրիլի 1-ը ներառյալ:

Պատվիրատուն «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ին ուղղված 11.05.2022թ. թիվ 04/35/10607-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ի միջև 03.03.2022թ կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/25-3» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն վերջինս պարտավորվել էր մինչև 01.04.2022թ մատակարարել 800 հատ մալուխային միացումներ, որը մինչ օրս չի մատակարարել:

Ելնելով վերոգրյալից, նախարարությունը, առաջնորդվելով Պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի բ) ենթակետով միակողմանի լուծում է Ձեզ հետ 03.03.2022թ կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/25-3» գնման պայմանագիրը:»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 11.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև 03.03.2022թ. կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/25-3» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.05.2022թ. թիվ 26/26-1/9123-2022 գրությամբ «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**